



0025, Կորյունի 2, ք.Երևան, ՀՀ

հեռ.+37460620212

rectorat@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 26 ՆԻՍՏՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ (ՆԵՐ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.09.2017 N 26

«Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) ռեկտորատը որոշում է.

1. Հավանություն տալ՝

1) ԵՊԲՀ-ի ռեկտորի կողմից ռեկտորատի առաջարկվող նոր կազմին (որոշում N 17-09-26-01),

2) օտար լեզուների ամբիոնի վարիչի պարտականությունների կատարումը դեղագիտական ֆակուլտետի դեկանին ժամանավորապես հանձնարարելու, ինչպես Վ.Բալաբանյանին ուսանողների ատեստավորման գործընթացում չներառելու առաջարկությանը (որոշում N 17-09-26-03),

3) կցագրված թվով հինգ անձանց ընդհանուր բժշկության ֆակուլտետի կցագրման ցուցակից հանելու առաջարկին (որոշում N 17-09-26-04),

4) ուսման ցածր առաջադիմությամբ թվով ինն ուսանողների ԵՊԲՀ-ից հեռացման առաջարկին (որոշում N 17-09-26-05),

5) ԵՊԲՀ-ի պրոռեկտորների պաշտոնների նկարագրերի նախագծերին (որոշում N 17-09-26-06),



6) ԵՊԲՀ-ի ռեկտորի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 92/Մ հրամանն ուժը կորցրած ճանաչելու, այդ հրամանով աշխատանքային խմբի անդամների կողմից փաստացի իրականացրած աշխատանքների բնույթով ու ծավալով պայմանավորված՝ վճարված հավելավճարների վերահաշվարկ կատարելու և հրամանով նախատեսված աշխատանքների իրականացման համար նոր աշխատանքային խումբ ձևավորելու առաջարկին (որոշում N 17-09-26-07):

7) ԵՊԲՀ-ի տնտեսական վարչության պետ Ս. Բարոյանին մեկ ամսական աշխատավարձի չափով պարգևատրման առաջարկին:

2. Հաստատել որպես ռեկտորատի քարտուղար բաց քվերարկության արդյունքները (ընտրվել է ռեկտորատի անդամ Մարթա Սիմոնյանը կողմ 24 դեմ 0 ձայների հարաբերակցությամբ) (որոշում N 17-09-26-08):

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌԵԿՏՈՐԱՏԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ



Ա. Մուրադյան

Մ. Սիմոնյան